



# ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ



Ուսումնառություն

Մշտադիտարկում

Ուսումնառության  
մատչելիություն

Բենչնարքինգ

**ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ** ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵԹԿՊԻ-  
ՈՒՄ ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ  
ԳՈՐԾԱԴՐՈՒՄԸ ԵՎ ՈՐԱԿԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ  
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԽԹԱՆՈՒՄՆ Է:

Փաստաթղթերի  
մշակում,  
գործարկում

Վերահսկում

Գիտելիքների  
գնահատում

Համակարգում

# Ի՞նչ է ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Կրթության որակի ապահովումը նշանակում է, որ բուհը հնարավորություն է ընձեռում ուսանողին ուսումնառության ընթացքում ձեռք բերել այնպիսի կոմպետենցիաներ՝

- գիտելիքներ
- հմտություններ
- կարողություններ

որոնք համապատասխանում են թե՛ ներքին, թե՛ արտաքին շուկայի պահանջներին, և անհրաժեշտ են հաջողության հասնելու և բարձր որակավորում ստանալու համար:

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ



Բուհի խնդիրը ոչ միայն որակյալ շրջանավարտներ տալն է, այլև բոլոր աշխատանքների որակյալ կազմակերպումը, որն իր մեջ ներառում է՝

որակյալ կադրերի նախապատրաստում

բուհում որակյալ գործընթացների կազմակերպում

աշխատակազմի որակավորման անընդհատ  
բարձրացում

# ԲՈԼՈՆԻԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Սկսած 2005 թ-ից՝ Հայաստանում կրթական ոլորտը լուրջ բարեփոխումների է ենթարկվում: 2007 թ-ի սեպտեմբերից հանրակրթական համակարգում իրականացված արմատական փոփոխություններին (երբ տասնամյա կրթությանը փոխարինելու եկավ տասներկուամյա կրթությունը) հաջորդեցին փոփոխությունները նաև բուհական կրթության ոլորտում:

Այս ամենի համար հիմք հանդիսացավ կրթության և գիտության ոլորտում մերձեցման ապահովման Եվրոպայի ձգտումը, որի արդյունքում դեռևս 1999թ-ին 29 երկրների կողմից ստորագրվեց Բոլոնիայի հռչակագիրը: Այժմ հռչակագրին միացած պետությունների թիվը հասնում է 46-ի, իսկ 2005 թ-ի մայիսի 19-ից հռչակագրին է միացել նաև Հայաստանը:

Ինչպես և հռչակագիրը ստորագրած յուրաքանչյուր երկիր, այնպես էլ, բնականաբար, Հայաստանը ստանձնեց որոշակի պարտավորություն, այն է՝ ըստ գործողությունների առանձին ուղղությունների՝ պետք է մինչև 2010 թ-ն ավարտել Բոլոնիայի գործընթացի հիմնական սկզբունքների իրականացումը և մաս դառնալ կազմակերպվող Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի: Բոլոնիայի գործընթացը տասը հիմնարար դրույթների ամբողջություն է:

Բոլոնիայի հոչակագիրն ամրագրում էր բոլոր այն պահանջները, որոնք անհրաժեշտ էին մինչև 2010 թվականը Եվրոպական բարձրագույն կրթության տարածք (ԵԿԲՏ) ստեղծելու համար: Հիմնադիր Բոլոնյան հոչակագիրն ապահովում էր ուսանողների և դասախոսների ազատ շարժունություն և հավասարապես մատչելի կրթություն: Գործընթացն այսօր ներառում է 49 ստորագրյալ երկիր:

## Բոլոնիայի հոչակագրի հիմնական դրույթներն էին՝

1. դյուրընթեռնելի և համադրելի աստիճանների համակարգի ընդունում,
2. հիմնականում երեք աստիճանների վրա հիմնված համակարգի ընդունում,
3. կրեդիտների համակարգի հիմնում,
4. աջակցություն ուսանողների և գիտամանկավարժական ու վարչական կազմի շարժունությանը,
5. աջակցություն որակի ապահովման ասպարեզում Եվրոպական համագործակցությանը,
6. բարձրագույն կրթության Եվրոպական չափայնության խթանում:
7. հարատև կրթության կարևորում,
8. բուհերի և ուսանողների ներգրավում,
9. Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի գրավչության խթանում:
10. դոկտորական ծրագիրը և սիներգիան Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի ու Եվրոպական հետազոտական տարածքի միջև:

ԵԹԿՊԻ-ում գործում է ուսանողների գիտելիքների պարբերական **ՍՏՈՒԳՄԱՆ** և **ԳՆԱՀԱՏՄԱՆ** բազմագործոն **ՀԱՄԱԿԱՐԳԸ**, որի հիմնական նպատակներն են՝

ա/ ուսումնական կիսամյակի ընթացքում գիտելիքների անընդհատ ստուգման և գնահատման օգնությամբ կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, խթանել գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռք բերմանը միտված լսարանային և արտալսարանային աշխատանքներին, խրախուսել մրցակցության տարրերը ուսումնառության գործընթացում և բարելավել դասահաճախումները:

բ/ քննությունների և ստուգումների իրականացման օգնությամբ ապահովել դասընթացի ուսուցման և յուրացման հետադարձ կապը՝ միտված դասավանդման և ուսումնառության բարելավմանը, դասընթացի հիմնավորված և արժանահավատ արդյունարար գնահատմանը:



# ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ

1	Հաճախումներ	20%
2	Միջանկյալ ստուգում	40%
3	Եզրափակիչ ստուգում	40%
	Հանրագումարային ամփոփում	100%

Դասընթացի /ուսումնական մոդուլի/, առարկայի ստուգարքի դեպքում գնահատումը կատարել 0-100 միավորներով՝ առաջնորդվելով տվյալ առարկայի գնահատման չափանիշներով.

# Գնահատման սանդղակը և բնութագրիչները

Գնահատման արդյունարար միավոր	Տառային գնահատական	Գնահատականի թվային համարժեք	Գնահատական	Գնահատման բնութագրիչները
97-100	A+	4,0	Գերազանց	Գիտելիքների և կարողությունների լիարժեք արդյունք
96 – 90	A	3,7		
85-89	B+	3,3	Լավ	Գիտելիքների և կարողությունների բարձր արդյունք՝ մասնակի թերացումներով
80-84	B	3,0		
70-79	C+	2,7		
60-69	C	2,3	Բավարար	Գիտելիքների և կարողությունների ընդունելի մակարդակ՝ զգալի թերացումներով
55-59	D	2,0		
51-54	E	1,7		
0-50	F	1,0	Անբավարար	Գիտելիքների և կարողությունների անընդունելի մակարդակ
51-100	S	-	Ստուգված	Գիտելիքների և կարողությունների դրսևորման ընդունելի մակարդակ
0-50	U	-	Չստուգված	Գիտելիքների և կարողությունների դրսևորման անընդունելի մակարդակ

# ԿՐԵՂԻՏ

Կրեղիտը չափում է ուսանողի միայն ուսումնական  
բեռնվածքը և չի գնահատում դասընթացի կամ  
կրթական մոդուլի բարդության աստիճանը,  
կարևորությունը և մակարդակը կրթական ծրագրում  
կամ ուսանողի կողմից դրա յուրացման որակը  
(գնահատականը): Այն չափում է ուսանողի  
ուսումնական աշխատանքի (ուսումնառության)  
ծավալը:

# Մենք կուտակում ենք կրեդիտներ



Ուսանողի լրիվ ուսումնական բեռնվածքը 1 ուստարում  
գնահատվում է 60 ECTS կրեդիտ:

ԵԹԿՊԻ-ում բակալավրի և մագիստրոսի  
կրթական աստիճաններում ուսանողի  
տարեկան ուսումնական բեռնվածությունը  
սահմանվում է 1800 ժամ = 60 ECTS կրեդիտի:

**1 կրեդիտ = 30 ժամ** լրիվ (լսարանային,  
արտալսարանային և ինքնուրույն)

շաբաթական **45 ժամ է = 1,5 կրեդիտ**

# Հարցեր





# ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

